

СОГЛАШЕНИЕ О СОТРУДНИЧЕСТВЕ

в научно – технической и инновационных
сферах

между Государственным комитетом по науке
Министерства образования и науки Республики
Армения и Некоммерческой организацией Фонд
развития Центра разработки и
коммерциализации новых технологий

г. Москва

Некоммерческая организация Фонд развития
Центра разработки и коммерциализации новых
технологий (далее Фонд), в лице Старшего
Вице-Президента по правовым и
административным вопросам Дроздова Игоря
Александровича, действующего на основании
доверенности № 21 от 21.11.2012, и
Государственный комитет по науке
Министерства образования и науки Республики
Армения (далее ГКН МОН РА), в лице
Председателя Самвела Гарниковича Арутюняна,
действующего на основании Резолюции
Председателя Правительства РА N 812- А от 20-
о е ноября 2007г. именуемые в дальнейшем
«Сторонами»,

учитывая исторически сложившиеся
научно-технические связи между Российской
Федерацией и Республикой Армения,

руководствуясь стремлением развивать и
углублять сотрудничество в области науки,
техники, исследований, разработок и
инноваций,

понимая, что взаимодействие армянских
специалистов с Фондом будет способствовать
повышению эффективности и расширению
форм сотрудничества между учеными Армении
и России,

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետության կրթության եւ
գիտության նախարարության գիտության
պետական կոմիտեի եւ «Նոր տեխնոլոգիաների
մշակման եւ առևտրայնացման կենտրոնի
զարգացման հիմնադրամ» ոչ առևտրային
կազմակերպության միջև
գիտատեխնիկական եւ նորարարական
ոլորտներում

ք. Մոսկվա

Հայաստանի Հանրապետության կրթության եւ
գիտության նախարարության գիտության
պետական կոմիտեն (այսուհետեւ՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ)
ի դեմս ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Սամվել
Գառնիկի Հարությունյանի (գործող համաձայն
2007 թ. նոյեմբերի 20-ի ՀՀ վարչապետի թիվ 812-
Ա որոշման) եւ «Նոր տեխնոլոգիաների մշակման
եւ առևտրայնացման կենտրոնի զարգացման
հիմնադրամ» ոչ առևտրային կազմակեր-
պությունը (այսուհետեւ՝ Հիմնադրամ)՝ ի դեմս
իրավական եւ վարչական հարցերով ավագ
փոխնախագահ Իգոր Ալեքսանդրի Դրոզդովի
(գործող համաձայն 21.11.2012թ. թիվ 21
լիազորագրի), այսուհետեւ՝ «Կողմեր»,

հաշվի առնելով Հայաստանի
Հանրապետության եւ Ռուսաստանի
Դաշնության միջև պատմականորեն
ձեւավորված գիտատեխնիկական
հարաբերությունները,

առաջնորդվելով գիտության, տեխնիկայի,
հետազոտությունների, մշակումների եւ նորարա-
րությունների ոլորտներում համագործակցությու-
նը զարգացնելու եւ խթանելու ցանկությամբ,

ընդունելով, որ Հիմնադրամի հետ հայ
մասնագետների համագործակցությունը
կնպաստի Կողմերի պետությունների
գիտնականների համագործակցության ձեւերի
ընդլայնմանն ու համագործակցության
արդյունավետության բարձրացմանը,

ունենալով խնդիրների եւ գործառնությունների
իրականացման ինքնուրույնություն,
գիտակցելով համագործակցության եւ

обладая самостоятельностью в реализации задач и функций,

понимая необходимость расширения поиска новых форм сотрудничества и участия армянских ученых и специалистов в работе Фонда,

оказывая содействие в обмене научно-технической информацией и технологиями,

договорились о нижеследующем:

Статья 1

Стороны будут содействовать развитию научно-технического и инновационного сотрудничества на основе принципов равноправия и взаимной выгоды.

Предметом настоящего Соглашения является сотрудничество в области подготовки и реализации научно-технических и инновационных проектов, выполняемых, в первую очередь, в рамках Межгосударственной программы инновационного сотрудничества государств – участников СНГ на период до 2020 года, а также других межгосударственных образований.

Статья 2

Стороны будут развивать сотрудничество по следующим направлениям:

- энергетика и энергосбережение;
- медицина, медицинская техника;
- медико – биологические и промышленные биотехнологии;
- биоинформатика и фармацевтика;
- информационно – коммуникационные и авиакосмические технологии;
- ядерные технологии.

Статья 3

В целях реализации сотрудничества Стороны будут осуществлять следующие совместные мероприятия:

Հիմնադրամի աշխատանքներում հայ մասնագետների և գիտնականների ներգրավման նոր ձևերի ընդլայնման անհրաժեշտությունը,

ցանկանալով նպաստել գիտատեխնիկական տեղեկատվության և տեխնոլոգիաների փոխանակմանը,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կնպաստեն գիտատեխնիկական և նորարարական համագործակցության զարգացմանը՝ իրավահավասարության և փոխադարձ շահի սկզբունքների հիման վրա:

Սույն Համաձայնագրի առարկան գիտատեխնիկական և նորարարական նախագծերի պատրաստման և իրականացման գործում համագործակցությունն է՝ առաջնահերթություն տալով մինչև 2020 թվականը ԱՊՀ մասնակից պետությունների նորարարական համագործակցության միջպետական ծրագրի և այլ միջպետական ծրագրերի շրջանակներում իրականացվող նախագծերին:

Հոդված 2

Կողմերը կզարգացնեն համագործակցությունը հետևյալ ուղղություններով՝

- էներգետիկա և էներգամատակարարում,
- բժշկություն, բժշկական տեխնիկա,
- բժշկական սարքանական և արդյունաբերական կենսատեխնոլոգիաներ,
- կենսաինֆորմատիկա և դեղագործություն,
- տեղեկատվական-հաղորդակցական և ավիատիեզերական տեխնոլոգիաներ,
- միջուկային տեխնոլոգիաներ:

Հոդված 3

Համագործակցությունն իրականացնելու համար Կողմերը կձեռնարկեն հետևյալ միջոցառումները՝

- содействие организации и реализации инновационных проектов, отвечающих взаимным интересам Республики Армения и Российской Федерации, в том числе, в рамках Межгосударственной программы инновационного сотрудничества государств – участников СНГ на период до 2020 года, а также других межгосударственных образований;

- содействие созданию совместных высокотехнологических предприятий в Республике Армения и Российской Федерации, поиск и привлечение для этой цели финансовых средств, объектов интеллектуальной собственности, передовых разработок армянских и российских научных организаций и учреждений;

- содействие путем предоставления соответствующей информации в организации размещения корпоративных исследовательских центров, организаций и предприятий Республики Армения на территории инновационного центра «Сколково»;

- организация и проведение совместных научно–практических конференций, симпозиумов, семинаров;

- организация и проведение переговоров с представителями официальных, деловых и научных кругов Республики Армения и Российской Федерации по вопросам, связанным с подготовкой и реализации проектов;

- содействие в реализации на венчурной основе проектов, предлагаемых организациями и предприятиями Республики Армения;

- содействие в подготовке совместных проектов по обучению магистрантов и аспирантов высших учебных заведений Республики Армения и Российской Федерации, а также обмену и обучению стажеров для компаний – партнеров, реализующих совместные проекты;

- в других формах по взаимной письменной

- աջակցություն այն նորարարական նախագծերի մշակմանն ու իրականացմանը, որոնք ներկայացնում են համատեղ հետաքրքրություն ՀՀ եւ ՌԴ համար, այդ թվում՝ մինչեւ 2020 թվականը ԱՊՀ մասնակից պետությունների նորարարական համագործակցության միջպետական ծրագրի եւ այլ միջպետական ծրագրերի շրջանակներում իրականացվող նախագծերին:

- աջակցություն բարձրտեխնոլոգիական համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը ՀՀ ում եւ ՌԴ-ում, այդ նպատակներով ֆինանսական միջոցների, մտավոր սեփականության օբյեկտների, հայկական եւ ռուսական գիտական կազմակերպությունների առաջատար մշակումների հայթայթում եւ ներգրավում,

- աջակցություն «Սկոլկովո» նորարարական կենտրոնի տարածքում ՀՀ կորպորատիվ հետազոտական կենտրոնների, կազմակերպությունների եւ ձեռնարկությունների տեղակայմանը,

- համատեղ գիտատեխնիկական ցուցահանդեսների, գիտագործնական գիտաժողովների, հանդիպումների եւ սեմինարների կազմակերպում եւ անցկացում,

- նախագծերի նախապատրաստման եւ իրականացման համար ՀՀ եւ ՌԴ պաշտոնական, գործարար եւ գիտական ոլորտի ներկայացուցիչների միջեւ բանակցությունների կազմակերպում եւ անցկացում,

- աջակցություն ՀՀ կազմակերպությունների եւ ձեռնարկությունների կողմից առաջարկվող վենչուրային հիմքով նախագծերի իրականացմանը,

- աջակցություն ՀՀ եւ ՌԴ բուհերում մագիստրանտների եւ ասպիրանտների ուսուցման համատեղ ծրագրերի նախապատրաստմանը, ինչպես նաեւ գործընկեր կազմակերպությունների համար փորձնակների փոխանակմանը եւ ուսուցմանը,

- Կողմերի փոխադարձ համաձայնությամբ այլ միջոցառումների տեսքով:

договоренности Сторон.

Статья 4

В целях осуществления координации мероприятий, указанных в Статье 3, Стороны создадут совместную рабочую группу с участием представителей Фонда и заинтересованных организаций Республики Армения, состав и периодичность встреч, которой будет определена по соглашению сторон.

Статья 5

Научно – техническая информация, полученная в результате совместной деятельности в рамках настоящего Соглашения, за исключением данных, составляющих коммерческую тайну, может распространяться в мировом научном сообществе в соответствии с действующим законодательством каждой из стран и правилами, принятыми в сотрудничающих организациях.

Статья 6

Настоящее Соглашение носит безвозмездный характер и не налагает на Стороны каких-либо финансовых и юридических обязательств и/или иных обязательств по исполнению положений, указанных в настоящем Соглашении.

Настоящее Соглашение не является предварительным договором либо соглашением о совместной деятельности в значении статьи 429 Гражданского кодекса Российской Федерации.

Стороны признают, что ни на момент подписания Соглашения, ни в будущем, настоящее Соглашение не налагает на Стороны каких-либо ограничений в отношении подписания соглашений, имеющих сходные с настоящим Соглашением предмет и цели, с любыми организациями, действующими как на территории Российской Федерации и Республики Армения,

Հոդված 4

Հոդված 3-ում թվարկված միջոցառումների իրականացման նպատակով Կողմերը ստեղծում են Հիմնադրամի եւ ՀՀ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված համատեղ աշխատանքային խումբ: Խմբի կազմը եւ հանդիպումների անցկացման ժամանակացույցը կորոշվի Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող համագործակցության շրջանակներում ձեռք բերված գիտատեխնիկական տեղեկատվությունը, բացառությամբ այն տեղեկատվությանը, որը պարունակում է առևտրային գաղտնիք, կարող է մատչելի դառնալ համաշխարհային գիտական հանրությանը՝ համաձայն Կողմերի պետություններում գործող օրենսդրությանը եւ համագործակցող կազմակերպությունների սահմանած կարգի:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրն ունի անհատույց բնույթ եւ Կողմերին չի պարտավորեցնում ստանձել ֆինանսական եւ իրավական կամ այլ պարտավորություններ կապված սույն Համաձայնագրի դրույթների իրականացման հետ:

Սույն Համաձայնագիրը չի հանդիսանում ՌԴ Քաղաքացիական օրենսգրքի 429 հոդվածով սահմանված նախնական պայմանագիր կամ համաձայնագիր:

Կողմերն ընդունում են, որ ո՛չ սույն Համաձայնագիրը ստորագրելու պահին, ո՛չ էլ դրանից հետո, սույն Համաձայնագիրը չի սահմանափակում Կողմերին՝ նույնատիպ բովանդակությամբ Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրանից դուրս ցանկացած այլ կազմակերպության հետ համաձայնագրեր կնքելու համար:

так и за ее пределами.

Соглашение регулируется и толкуется в соответствии с законодательствами Российской Федерации и Республики Армения.

Статья 7

Любые разногласия, возникающие при толковании и применении положений настоящего Соглашения, будут решаться путем консультаций и переговоров.

В случае невозможности решения разногласия путем консультаций и переговоров, стороны имеют право передать спор на рассмотрение в суды г. Москвы

Статья 8

По взаимному соглашению Стороны имеют право вносить изменения и дополнения в настоящее Соглашение. Любое такое изменение и дополнение оформляется в виде протокола Соглашению, которое вступает в силу с момента его подписания уполномоченными представителями обеих сторон и является неотъемлемой частью настоящего Соглашения.

Статья 9

Настоящее Соглашение вступает в силу с момента его подписания, действует в течение пяти лет.

Совершено в г. Москва, «_04_» апреля, 2013г. в двух подлинных экземплярах на русском и армянском языках. При этом оба

Համաձայնագիրը կարգավորվում էի մեկնաբանվում է ՌԴ եւ ՀՀ օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման ընթացքում ծագած ցանկացած տարաձայնություն կլուծվի խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

Խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով տարաձայնությունները չկարգավորելու դեպքում Կողմերն իրավունք ունեն գործը քննության հանձնել ք. Մոսկվայի դատարան:

Հոդված 8

Կողմերն իրավասու են փոփոխել կամ լրամշակել սույն Համաձայնագիրը: Ցանկացած լրամշակում եւ փոփոխություն ձեւակերպվում է առանձին արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի լիազորների ստորագրելու պահից եւ կազմում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից եւ գործում է 5 տարի ժամկետով:

Կատարված է ք. Մոսկվայում, 2013 թ. ապրիլի «_4_»-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը հայերեն եւ ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանության ժամանակ տարաձայ-

текста являются аутентичными. В случае противоречий преимущественную силу имеет текст на русском языке.


За Некоммерческую организацию Фонда развития Центра разработки и коммерциализации новых технологий

И.А.Дроздов
Старший Вице-Президент по правовым и административным вопросам, действующий на основании доверенности № 21 от 21.12.2012



За Государственный комитет по науке Министерства образования и науки Республики Армения (Гос. Регистрационный номер: 28518006727)

С.Г.Арутюнян
Председатель, действующий на основании Резолюции Председателя Правительства РА N 812- А от 20-ое ноября 2007г.



նությունների դեպքում նախապատվությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից
(Պետական գրանցում-28518006727)

Ս.Գ. Հարությունյան
Նախագահ գործող համաձայն 2007 թ. նոյեմբերի 20-ի ՀՀ վարչապետի թիվ 812-Ա որոշման



Նոր տեխնոլոգիաների մշակման եւ առևտրայնացման կենտրոնի զարգացման հիմնադրամի կողմից

Ի.Ա. Դրոզդով
Հիմնադրամի ավագ փոխնախագահ՝
Գործող 21.12.2012թ. թիվ 21 լիազորագրի համաձայն

